600.0120.14.04.21

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ապրիլի 2021 թվականի №120Ա

ք. Երևան

## «ՍՈԼԱՐՍԻՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ԱՐԳԵՍՏ» ՀՈՂՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԷ №0618 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2018 թվականի հունվարի 31-ի №14Ա որոշմամբ «ՍՈԼԱՐՍԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի վարչական տարածքում, «Արգեստ» հողմային էլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0618 լիցենզիան (այսուհետ՝ ԼԷ №0618 լիցենզիա)՝ մինչև 2041 թվականի հունվարի 31-ը գործողության ժամկետով, որից կառուցման ժամանակահատվածը՝ մինչև 2021 թվականի հունվարի 31-ը,

բ) Հանձնաժողովի 2021 թվականի հունվարի 29-ի №20Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) 34 ամսով երկարաձգվել է ԼԷ№0618 լիցենզիայով ամրագրված Կայանի կառուցման ժամանակահատվածը, ինչից ելնելով՝ Որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով Ընկերությունը պարտավորեցվել է Որոշումն ուժի մեջ մտնելու պահից քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 10,000,000 (տասը միլիոն ) դրամ գումարի երաշխիք՝ մինչև 2024 թվականի հունվարի 14-ը գործողության ժամկետով, ինչը, սակայն, Ընկերության կողմից չի կատարվել,

գ) Հանձնաժողովը 2021 թվականի մարտի 19-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջի

խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, որի մասին Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2021 թվականի մարտի 19-ի №ԳԲ/34.1-Մ2-5/779-21 գրությամբ,

դ) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը որևէ փաստարկ չի ներկայացրել,

ե) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի՝

1) 8-րդ կետի համաձայն՝ այն դեպքում, երբ Հանձնաժողովը որոշում է ընդունել արտադրության լիցենզիայով սահմանված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածը երկարաձգելու մասին, Հանձնաժողովի որոշմամբ կամ գրությամբ սահմանված ժամկետում, լիցենզավորված անձը Հանձնաժողով է ներկայացնում կարգին համապատասխան հաշվարկված երաշխիք,

2) 8.1-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 8-րդ կետին համապատասխան լիցենզավորված անձի կողմից երաշխիք Հանձնաժողով չներկայացվելու դեպքում լիցենզիայի գործողությունը կասեցվում է,

զ) վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջը, և

հիմք ընդունելով Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 8.1 կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան երաշխիք Հանձնաժողով չներկայացնելու համար կասեցնել ԼԷ №0618 լիցենզիայի գործողությունը՝ մինչև խախտման պատճառի վերացումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ այն ստանալու պահից 15 օրյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝** **Ս. ԱՊԻՆՅԱՆ**

ք. Երևան
14 ապրիլի 2021թ.